

# Մեծ Յոթեկեան Եւ Տարուի Մեջ

Պայքը Յոսեփիկի անորդ աչքի մը նուր  
նոց և թոռնիկը անոր ողորդ մը խաղող  
ի ծուլաւ . . .

Հայկական գրեթէ 1500 ամ-  
եակի և Հայկական տպագրութեան 400  
ամեակի Մեծ Յոթեկեաններուն առթիւ,  
տեղեակ և այս տարուան ընթացքին մէջ  
Կոչկաս, Պարսկաստան, Արտասահմանի  
Հայ Գաղութներուն և նոյն իսկ Թուր-  
քիոյ զանազան հայաբնակ քաղաքներու  
մէջ արդէն կատարուած հանդէսներու ա-  
մենէն ուշագրւունքէն մէկն ալ պէտք է  
համարել Տարուի Առաքելոց վաղեմի վան-  
քին մէջ կատարուած շատ սրտաշարժ  
Յօթեկեանը՝ շրջապատուած շինականնե-  
րու և ամէն կողմէն նոյն փութացող գեղ-  
ջուկներու սասուտաթիւ ներկայութենէն:

Առաքելոց վանքի այդ յոբելանին  
նշանակութիւնը անոր համար աւելի մեծ  
է, որովհետեւ այդ հասմանի և վաղեմական  
դասերու կանգուն վկայ եղող վանքին  
ստուերու տեղումն տակ կը հանգչին կարգ  
կարգ մեր ամենէն դերբըջանիկ նախա-  
նախորդէն Ս. Թարգմանիչները, սրբազան  
մատենագիրները, և մէկ խօսքով նոյն է  
Հայկական Փարսկէստեան ամենէն շրջողուն  
աստղերու նշխարներուն ամբողջական գա-  
րը. նոյն է որ նրաքանակ քաղաքաբե-  
րու և կարգ կարգ շարուած դասարան-  
ներու ներքե կը հանգչին Ասողիկն ու  
Հաղարը, Գաւթիկն ու Գլուխը, ներուէն  
ու Մովսէսը, Թուանն ու Տարուեցի Պօ-  
ղոսը, և դարձեալ նոյն է որ Մամուկանեան  
իշխաններն ու Տարուի առեւծները կը  
քննան իրենց յաւիտեական քունը:

Սէ չէ՞ որ Հայկական տառերու երկ-  
նաշունչ յաղորմներն ալ, ասկէ հազար  
հինգ հարիւր տարիներ առաջ, Ս. Սահա-  
կի և Մեսրոպի հարեանաէր շուշիկն տակ  
այնտեղ կը մարմնաւորուէին, կը կերպա-  
ձեւուէին, չէ՞ որ առաջին հայ դպրոցները  
նոյն կը հաստատուէին և առաջին սրբա-  
զան թարգմանութիւններն ու մատենա-  
ները այդ վանքերուն մէջ կը հոգեբարդե-  
ին:

Ինչ ուրեմն աւելի պատկառազողու,  
աւելի հոգեգրայլ, աւելի վեհազգեցիկ  
Տարուի Աշխարհին համար, քան այն Յօ-  
թեկեանները որ նոյն կատարուած են այդ  
վաղեմի շիրիմներուն ու խաչքարերուն  
շուրջը, ուր հայութեան անդրանիկ գիրը  
մատենանից եղաւ և գծագրուեցաւ Սա-  
հակին և Մեսրոպին մատեններուն տակ՝ իր  
ու Սինայի աստուածառօք պատգամը:

Այդ շիրիմներուն պարփակած սրբազան  
նշխարները և ոսկերտները անգամ մը ևս  
խայտաջին տնչուշտ այդ օրը հայ գրին և  
հայ առին կատարած մեծութիւնը հո-  
գեին զգալով, երբ դարերու խորութեան  
մէջէն իրենց գաւակները իրենց մեծու-  
թիւնը կերպէին և կը տարփողէին վարժ-  
արանի երախտապարտ աշակերտներու  
բերէն ևլած շարականներով և ՄԻԵր հայ-  
րենիքով:

Մտքը կը տարուի վարկեան մը հոն  
ըլլալ և հոգեկան աշխարհով տեսնել ու  
մտքի ականջներով լսել այդ շիրիմնե-  
րուն տակ քնացող հայկական մեծութեան-  
ներու խայտանքն ու հոգեզուարթ բերկ-  
րութիւնը, ի տես այն երախտապարտ  
զգացումներուն, որոնք կ'ցանցումնին այդ  
պարզուկ գերեզմաններուն և խաչքարե-  
րուն շուրջ, իրեն արտայայտութիւն և ե-  
րախտապարտութեան:

Սէ ալ ինչ ունի Տարուեցի հայ գեղջուկն

ու հայ շինականը այդ շիրիմներուն ըն-  
ծայելու, քան աննրիք երախտապարտու-  
թիւնը, քան ճիւղացող խուսկը և մաքուր  
աղօթքը, որ կը վերառաքէ այդ օր իր  
տրիտուր և իր հատուցուած անփխարհի  
նելի բարիքներու: Արուսիկ աղքատու-  
թեան մէջ տուայտող, թայմուած ու  
թշուառութեան մէջ տառապող իրենց  
հայ գաւակներէն թող այդ Հայ Փանթէօ  
նին տակ քնացող մեծութիւնները չսպա-  
սեն աւելի քան երախտագիտութիւնը,  
խուսկն ու աղօթքը, որովհետեւ այդչափ  
ուրին և իրենց ունեցածն է որ աւելի են  
սրտագին: Աւ թող իրենց ուխտն ընդու-  
նական ըլլայ:

Տարուի վանքին տպանաքարերու  
շուրջ արտայայտուած զգացումներուն  
մէջ մենք գրեթէ ամենէն աւելի ազդուե-  
ցանք անոր արժանաւոր Առաջնորդ Պա-  
րսխանեան Սրբազանի խօսած հոգեշունչ  
ճոռին սա պարբերութենէն. «Թող վար-  
զը պէտք է սիրայօժար մասնակցի Մուշի  
մէջ հաստատուելիք արագաշարժ Մամուկի  
մը ֆօտիւն»:

Մամուկով մը օժտել կ'ուզէ ուրեմն  
Խարխտեան Սրբազան Տարուի, ուր ծը-  
լած է հայ տառը, ուր ծագած է հայ լե-  
զուն և ուր դեռ վերջին բեկորներն ու  
մեծցորդները կ'ընդունարուն հայ ոսկե-  
զինիկ դպրութեան ոսին, հուշարին և լեզ-  
ուային հարստութեանց, Պէտք է ըսել թէ  
Տարուի շրջապատներով և վանքերով  
առաջինը եղաւ հայ նին լեզուին ծագակե-  
ղարին և ուրկէ ամենէն վերջն է որ կի-  
լէ և կը վտարուի դրեթէ մեր նախնայ  
լեզուն՝ գրաբարը: Այսօր եթէ խնամով  
լսենք և հետեւինք զեռ Մշեցիին լեզուին,  
պայժառ հուշարին, անոր գործածած նախ-  
դիրներուն և շարադասական կարգերուն  
ու ձևերուն, դեռ պիտի ուրախութեամբ  
զանենք նին օրերու զորոյժ անեղծ պահ-  
ուած, որ, աւաղ, հետզհետէ կորսուե-  
լու վտանգին մէջն է:

Մամուկ մը կուզէ Տարուեցին հայու-  
թիւնը: Պիտի տայ հայութիւնը այդ մա-  
մուկ այն պատճառին, որ ամբողջ հայու-  
թեան բերնին մէջ կենդանի լեզու մըն է  
դրե՛ր, ժամանակին, ամբողջ հարստութիւն  
մը որով կրցիր է պահպանել Հայ Ազ-  
գը:

Այս տեղ մեր միտքը կուզայ սա պարզ  
ասութիւնը. «Պայքը իր թոռնիկին ամ-  
բողջ աչքի մըն է նուիրեր, և թոռնիկը  
ողկոյզ մը խաղողը զլացեր է իր պապուն  
տալ»:

Հայ գրերու և տպագրութեան Յօթեկե-  
անին առթիւ բազմաթիւ առաջարկներ  
եղան կազմուելու վրայ եղող ֆօնտի մը  
գործածութեան մասին. ոմանք առաջար-  
կեցին վարժարաններ հիմնել, ուրիշներ՝  
մատենագիրները և պատմագիրները հրա-  
տարակել, և զարձեալ՝ մամուկը բարե-  
կարգել, հայ նախնայական ուսումնա-  
նարաններու վրայ ուսումնասիրութիւններ կա-  
տարել կն. ևն.։ Թողունք որ դեռ Յօ-  
թեկեանները ամէն տեղ կատարուին և  
Ֆօտիւր որչափ նւար է մեծ գումարներու  
հասնի, Հայ Ազգին բազմակողմանի պէտ-  
քերը շատ են, առ այժմ ամենէն հականք  
Ֆօտիւր մեծութիւնն է: Թող վերջանան  
Յօթեկեանները, թող փակուի Ֆօտիւրը և  
անոր գործածութեան եղանակը զիւրին  
է որոշել:

Բայց այն, ինչ որ հայութենէն կը  
խնդրէ Տարուի. մեծ բան մը չէ ինքնին  
արդէն, Մամուկ մը: Կէ մենք հայութեան  
կը յիշեցնենք պապուն այգիին և թոռնի-  
կին կուզ մը խաղողին պատմութիւնը, և  
չենք յուսար որ գտնուի մէկը որ հակա-  
ռակի Տարուի օժտելու համար մամուկով

մը, որ անոր հայութեան համար կատա-  
րած դերին առջև ոչ միայն կուզ մը խա-  
ղող ըսել չէ, այլ և հատիկ մը խաղող  
անգամ չարժեք . . .